

առ պատմութեան առ առ պատմութեան առ պատմութեան առ առ  
**ՀԵԼԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐԸ**

(Քաղուած Մարբուրգի համալսարանի յունա-հունվակագիւ  
 ուսուցչապետ Բ. Նիզէի տեսչական նաուից, որ նա խօսել է  
 1900 թի նոյ. 15-ին).

Կասիք հին դարը, որի մասին դրական աշխարհը զմայլ-  
 մունքով խօսում ու դրում է, նորի հետ համեմատած շատ  
 փոքրիկ էր. մեր ժամանակի գիտութիւնը ըսդդրկում է ամբողջ  
 երկրագունդը, մեր հետազոտութիւնները հիւսիսային քենուից  
 մինչև հարաւայինն են ձգում, մեր վաճառականութիւնը կա-  
 պուած է այնպիսի երկիրների հետ, որոնց մասին հին-դարը  
 իոկի դադարիար չունէր:

Հին-դարի պատմական կետնքը ոսհմանախակուած էր մի-  
 ջերկրական ժողի ափերի վրայ, այդ ժողի շուրջը նստուել էին  
 ժողովուրդները, ինչպէս գորտերը մի աւազանի շուրջը (Պղատոն):

Յունաստանն է այն երկիրը, որ հին պատմական կետնքն  
 ու քաղաքակրթութիւնը իր մէջ ամփոփեց և հելլէն ժողովուրդը  
 իւր այդ քաղաքակրթութիւնը վաճառականութեան և դա-  
 ղութեան միջոցով տարածեց միջերկրական ժողի ափերի վրայ  
 և հառվիր վերցնելով իր վրայ, հաղորդեց հիւսիսային ազգերին՝  
 նւրոպայինն. իսկ Արևելքը այդ քաղաքակրթութիւնից բաժին  
 ստացաւ Աղեքսանդր Մեծի և նորա յաջորդների օրով: Հելլե-  
 նականութեան այս շրջանը, որ հասաշխարհային նշանակու-  
 թիւն ունի, անուշագրութեան մատնուած էր, մինչև որ Յոհ.  
 Gust. Dreyzen ճանապարհ բացաւ և ուրիշ հետախուզողները ցոյց  
 տուին թէ հեղինակութեան այս դարը համաշխարհային քա-  
 ղաքակրթութեան պատմութեան համար ի՞նչ հոկայ նշանակու-  
 թիւն ունի:

Եթե Աղեքսանդր Մեծը իւր գէալի Ասիա կատարելիք արշա-  
 ւանքն սկսեց, յոյն քաղաքակրթութիւնը իւր բարձրագոյն դա-  
 դաթեակէտին էր հասել. գրականութիւնը, գիտութիւնը, գե-  
 ղարուեսուը հասունացել էին և մարդկային մտածողութեան և  
 հետազոտութեան անլուծելի պրօբլէմների առաջ էր կանգնել  
 յոյն ժողովուրդը. և տարածել էր արգէն իւր քաղաքակրթու-  
 թիւնը Միջերկրականի հիւսիսային և հարաւային ափերին և  
 հելենացը էր այդ ժողովուրդը. Աղեքսանդր Մեծը տարաւ  
 ասհմանները: Նա բռնի կամ սիրով ընակեցը յոյներին նոր

ախրապետած երկիրներում և նոցա օդնութեամբ կամեցաւ աքամինեամսերի հոկայ պետութիւնը նորից վերակենդանացնել, հաստատելով խաղաղութիւն այդ երկիրներում՝ ծաղկեցրեց վաճառականութիւնն և արուեստը Բայց, ափսոն, նա շուտ մեռաւ: Նորան յաջորդող զօրավարները յարատե կութեներում լայնատարած պետութիւնը բաժան բաժան արին, Պաղսմէոսը ժառանգեց Եղիպատոսը, Անդիկոնոսը՝ Մակեդոնիան և Սելևկոսը՝ Ասիան, որից շուտով բաժանուեցին կրիին Պերգոմանը, Կապադովիկեան և Հայաստանը: Սոկայն չնայած դորան, Աղէքոսնդը յաջորդները ջանք էին թափում յոյն տարրը և յունական կեանքը ծաղկեցնել իրենց ոահմաններում: Ինք՝ բուն յունաստանը կիսանկախ գրութեան վերածուեց, յոյն դազութները Եղէտկան և Սե-ծովի ափերին անկախ հոչակուեցան: Հռոդոս կղզին հին գարի Վենետիկը գարձաւ իւր քաղաքակրթութեամբ և վաճառականութեամբ: Նոյն իոկ Պարսկաստանի խորքերում, ուր յոյներն ու մակեդոնացիները տեղաւորուել էին, նկատուեցան նոքա իր արտօնեալ տարր և առանձնաշնորհեալ ժողովուրդ, այս պատմառով նոքա կարողացան ազգել շրջակայ ժողովուրդների վրայ և տարածել իրենց լեզուն, ոովորութիւններն ու կրօնը: Պարսկաստանի պտղաբեր երկիրներում յոյն գաղութները կազմ ժամանակում շքեղացան—փարթամացան: Նոցա շարժուն կեանքը բազմակողմանի դարձաւ և երբէք չկտրուեց մայր հայրենիքից: միայն նոր արուեստը իր գոյնը մի քիչ փոխեց, դառական արուեստի նախկին հանդարտութիւնը գարձաւ շարժուն և կրքոտ, նեսովիաները, Լաօքոնը, մեռնող Գալլիացին, Փուշ դուրս քաշողը և Բելվեդերի Ապօլոնը հելենականութեան արդիւնք են: Բանաստեղծութիւնը դառնում է թեթև, բայց պիտի առել, որ այս ժամանակ ոկիզք է դրւում գրականութեան այն բոլոր տեսակներին, որ այժմ մենք ունինք. այնպէս նաև զիտութեան ճիւղերը, ինչպէս են աստղագիտութիւնը, մաթեմաթիքը, մեքենագիտութիւնը, բժշկութիւնը և ոոցա հետ պատմական առարկաները. այս դարում շատ գիւտեր են եղել. օրինակ Կոպերնիկոսի վարդապետութիւնը արենի սիստեմի մասին իրեք հիւպօթէզ դրուած էր արդէն այն ժամանակ. կարելի է առել ուրեմն, որ հելլենականութիւնը հին-դարու գիտութեան շրջանն էր:

Հելլենացումը աւելի կատարեալ, աւելի աքագ և աւելի հեշտ տարածուեց Եղիպատոսում. Պաղսմէոս Ե-ը և նորա յաջորդները յոյն ոյժերի օգնութեամբ վերակենդանացըն փարաւոնների աշխարհը. մի խիոտ կենդրուացուած իշխանութեամբ, գեղեցիկ կերպով կարգավոր պաշտօնէութեամբ և հարկի

սիստեմով թէ՛ իրենց աշխարհը հարստացրին և թէ՛ իրանք հարստացան և այդ հարստութիւնը գործ զբին հելլանականութիւնը ծաղկեցնելու. Նոքա յարաքերութեան մէջ մասն մայր երկրի՝ Յունաստանի և մանաւանդ Աթէնքի հետ և Աղէքսանդրիա մայրաքաղաքը գարձրին հելլենականութեան փառքի տաճար։ Այս նոր Աթէնքում պալատների կողքին բարձրացան մուղէումները կամ ճեմարաններ, ուր զիտնականներն էին հաւաքում վիճելու. Պտղոմէոս Լ-ը հիմնեց Աղէքսանդրիայի նշանաւոր մատենագարանը և փոխադրեց, իսկ Պտղոմէոս Ա-ը արուեստի հին և նոր արդիւնքներով դարդարեց (285—247): Կալիմախոսի և Թէքրենի պէս բանաստեղծները պատեղ ծաղկեցին, այստեղ էր նշանաւոր բժիշկը Հերոֆիլոսը, որ անդամանական ուսումնելներով էր զբաղվում, այստեղ գործեց և ուսոյց Մաթեմատիկոս Եւկլիտէսը, նշանաւոր մեքենադէտ Ալեխմէտէոր Սիրակուսի պաշտպանը, այստեղ իւր ուսումն առաւ. իսկ Երատոսթենէսը այստեղ մատենագարանապետ էր, որը զիտական աշխարհագրութեան և քննադատական պատմութեան հիմքը դբաւ. ոոքա այն մարդկանց գասին են պատկանում, որոնց քաղաքակիրթ մարդը երբէք չպիտի մոռանայ:

Պտղոմէանք մինչև Քր. 200 արօի առաջ իշխում էին Միջերկրական ծովի վեայ. հետիսային Աֆրիկան, Կիւրենէն, Բարքոն, Հարաւային Ասորեսը, Պաղեստինը, Կիպրոսը, Փոքր-Ասիայ հարաւային ափերը, Ափեսոսը, Սամոսը նրանց ձեռքումն էին. Նոքա Կարմիր ծալը միացրին Նեղոսի հետ և այդպիսով յարաքերութիւն սկսեցին Աֆրիկէի արևելեան ափերի հետ, որտեղից նոքա վղեր էին ձեռք ըերում, Նեղոսի ակունքներ փնտուելով, նոքա հասան մինչև Խթովպիա, մինչև հասարակածային Աֆրիկա։ Այս միջոցին գտնուեցաւ նաև Եթիպտոսից գէպի չընդհաստան գնալու ճանապարհը և եթէ արաք ծովահէնները մինէնն, այս Երթևեկութիւնը գնալով պիտի մէծանար:

Եթիպտոսից յեայ հելլենացումը պարաբո հող գտաւ Փոքր Ասիական երկերներում։ Եփեսս, Զմիւռնիա, Մագնեղիա, Սարդէս նորից ծաղկեցին ու բարգաւաճեցան և քաղաքակրթական նշանակութիւն ստացան. Պիրգամոնը, որը սկզբում մի աննշան աւան էր, գառնալով նոյնանուն թագաւորութեան մայրաքաղաք, կարճ միջոցում այնպիսի բարձրութեան հասաւ, որ իւր արսեսաով և զիտութեամբ մըցում էր Աղէքսանդրիայի հետ. Նորաշէն Նիկոմիդեան արևելքի համբաւաւոր քաղաքներից մէկը գարձաւ։ Այս քաղաքակրթական հոսանքը այնքան զօրեղ էր, որ բարբարոս ժողովութզների թագաւորները՝ Միթրեկատն ու Տիգրանը կարեսը էին համարում հելլէն ժողովաւրդը

ըսոնի կամ ոիրով իրենց մայրաքաղաքնեցում ըստկեցնել և նորանց ձեռքով իրենց երկրի քաղաքակրթական մակերեսոյթը բարձրացնել:

Սիրիան, որը մասամբ Պտղոմեանց և մասամբ Սելևկիան-Ներին էր պատկանում, համարեա, ամրողջովին հելլենական էր. Տիւրոս, Սիդոն և Ասկալոն փիւնիեան քաղաքներում յունականութիւնը տմուր պատուատուեցաւ, իսկ Անտիոքեան յայտնի է, որ արևելքի մոյրաքաղաքը դարձաւ: Կա իւր գեղեցկանիստ վայրով և շրջապատուած հրաշալի արուարձաններով Ազեր-անդրիային գերազանցեց: Միջադեպն անգամ վերակենդանութեան նշաններ էր յոյց տալիս: Մծրին, Բարիլսն, Անտիոքիա և Սելևկիա անունները բաւական են յոյց տալու, որ հին դարու ազնիւ յայն տարրի ձեռքը այնտեղ էլ գործօն էր: Այստեղից մինչև Բաքտրիա տանող ճանապարհը յոյն գագթականութիւններով ըռնած էր. Մերկը, Ներաթն և Քանդահարը հելլենական քաղաքներ էին:

Հելլենական քաղաքակրթութեան այս հոսանքն ի նկատի ունենալով միայն կարող ենք հասկանալ, թէ ի՞նչու պարթեաները որ Աղեքուանդրի մահուանից հազիւ մի դար յետոյ (240 ա. Քթ.) գլուխ բարձրացրին և մտկեզնացիներին խլեցին մէկ միւսի յետեկից զանազան նահանգներ, այնուամենայնիւ հելլենականութիւնը իրը դործօն ոյժ ճանաչեցին. պարթեան գուստները անուանում էին իրենց հելլենատեր, յոյն քաղաքները մնացին մասսամբ լինքնակախ և պարթեան թագաւորների դրամները յունականի դրոշմով և վերտառութիւններով կտրուեցին: Աւելի զննանալի երեսոյթ է յունական թագաւորութիւնը Բակտրիայի և Հնդկաստանի սահմաններում: 240 թուերին Բակտրիայի յայն աեղալահը իրեն անկախ յայտարարեց և ժամանակի ընթացքում այս թագաւորութիւնը կռիւ մզելով պարթեների և շրջակայ վայրենի ցեղերի հետ, իւր սահմանները ընդարձակեց: Իրանի և Թուրքեստանի արևելեան նահանգները ենթարկուեցան այդ իշխանութեանը, որի գնդերը մինչև Քաջիար հանելով, առաջին անգամ չինաց հետ յարաբերութեան մէջ մտան, հարաւում Հինտուքուշը և Խոզուս կոչուած երկիրը յունական գերիշխանութիւնը ճանաչեցին: Սոցա զբամները յունական և արիական վերտառութիւն են կրում, իսկ Հընդկաստանում յոյն տարրը ժամանակի ընթացքում կտրուելով բուն հայրենիքից, ըու դգայականութիւն ընդունեց: Քիչ յետոյ անվերջ գահակալական կռիւները խախտեցին այս իշխանութեան հիմքը, մինչև որ 140 թուերին սկիւթական բարբարոս և

թափառական ցեղերը բոլորովին կուժանեցին. սակայն Հնդկաստանում մի անգամ էլ յայները դժուխ բարձրացրին և նրանց վերջին նշանաւոր Մենանգը թագաւորը տարածեց իւր իշխանութիւնը և մեռնելուց յետոյ մի տրգարակորով և քաջ իշխանին անուն թողեց. բայց սկիբթերը այսակը էլ հասան և չարդ ու փշուր արին այս իշխանութիւնն եւ:

Մակեդոնացիների և մահամարտկ հելլէնների յառաջիսաղցումը Ասիայում այն կորեոր հետեանքն ունեցոն, որ յոյն գիտութիւնը, վիլխոռիայութիւնն ու արուեստը միջազգային գարձան. այս բանը վկայում է մեղ ստոյեկեան վիլխոռիայութիւնը և մանաւանդ նորա հանքամարդկոցին բարոյական տեսութիւնը: Բայց սցստեղ պէտք է նկատել որ հելլենները իրենց յառաջիսաղցման մեջոցին Ասիայում բոլորովին վայրենի ըստը բարսսների չհանդիպեցին, ընդհակառակն Արևելքն ու Եղիպատուը որոքան էին հին քաղաքակրթութեան: Ազէքսանդր Մեծը պէտք եղած յարգանքը ցոյց տուաւ տիրող սովորութիւններին ու կարգերին. բուն պարսիկ ժողովուրդը յոյն ժողովուրդին հոմապատիւ նկատուեցաւ, և յայները չէին քաշումը նոցս քաղաքակրթութիւնն ես իւրացնել: Այսպիսով առաջ եկաւ մի նոր խառնուրդ, փոխազարձ ամուսնութեան ու վարոյթն էլ այս բանին մեծապէս նպաստեց. այս երեսյթը ամենից շատ նկատելի է Եղիպատում, ուր թէպէտ յոյն առըքը գերակշռող էր, բայց այնուամենայնիւ տեղական լեզուն, կրօնն ու կարգերը չնշուեցան. չնայած դորան յոյն լեզուն միջազգային և դիտական լեզու նկատուեցաւ: Եղիպատացի Մանեթօն Պաղոմեոս Ա-ի օրով գրեց Եղիպատոսի պատմութիւնը յոյն լեզուով, որը այդ երկրի պատմութեան կարեռը աղքեւրներից մէկն է: Այն բանը արաւ Քաղզէացի Եերտսոսոք, (Առենացու յիշատակած պատմագերը,) Բարելոնի և Փիւնիկեայի նկատմամբ. հրէաներն էլ, որ մի փակ կեանքով ապօնզ ժողովուրդ էին, այս հոսանքից հեռու չմնացին, հելլենական ազգեցութիւնը մուտ գործեց այստեղ Եղիպատոսից, շուտով հին կտակարանը յօւնարէն թարգմանուեցաւ և հրէաների ձեռքով շատ յոյն գրքեր դրուեցան:

Սրեմու տքում հելլենականութիւնը ունեցաւ երեք յենակետեր—Սիկիլեան և Հարաւային Խտալիան, Արթագէս և վերջապէս Հոռվմը. հարկ կաց արդեօք մանրամասն նկարագրել, թէ ի՞նչպէս հելլենականութիւնը այն պետութիւնների հոգին էր: Յոյն բանաստեղծները, արուեստագէտները, մեքենագէտները և ուսուցիչները հռովմում և ամրող նախալիայում հելլենականութիւն էին պատուաստում, հելլենականութեան այս

յաղթական հոսանքը ողողեց նաև Սպանիա, հարաւային Գաղղիան և մինչև անդամ՝ Մամենիայի երկիրը՝ նումիզեան։ Այս բոլորից յետոյ ի՞նչ զարմանք, որ հերօնի որևէ հոկայ հօէչն անդամ՝ Յունաստան էր գնում իւր աշխարհասահան գլուխը հելենականութեան որունում պոտելու։ Բայց առ բացառիկ ելքոյթ չէր։ Յունաստանի քաղաքակրթութեան ազդեցութիւնն առ ազգերը և նրանց իշխանները, յօյն ասառնաձները, նոցա արձանները և յոյն առաստեղաբանութիւնը, ո՞վ աշխարհը մուտքարժութեցին։ Խրաբանչիւր աշխարհի ազգաբնակութիւնը և մասնաւանդ իշխանական տները աշխատում էին իւնց մի յոյն պատճուց կամ հերոսից ծագած համարել։ Յառնի և Մետայի զոյցը կարելի էր Հայաստանում լուել։ Եթի այս բոլորը կատարեւում էր, ուր էին գերման ժողովուրդները։ Առքա հիւսիսային և արևելեան նւրապայի անտառներում թափառելիս ամենալիոքը նշոյլ անգում չունէին հելէն քաղաքակրթութիւնից, մինչև որ հռովմէացիք Քրիստոսից յետոյ նոր տիրապետութիւնների չնորհիւ կելտական տեղերը քաղաքակրթեցին և գերման ժողովուրդների հետ մօտիկ շիման մէջ մտան։ որպէս Հռովմը Քրիստոսական եկեղեցու և Կելտական ցեղերի միջոցաւ յունահռովմէական քաղաքակրթութիւնը հալորդէց գերմաններին և ինքը մեռաւ, ինչպէս զորանից առաջ քաղաքակրթութեան մայրը՝ Յունաստանը մեռել էր։ Կարելի է ուրեմն համարձակ ասել, որ Հռովմը միայն միջնորդի դեր է կատարել. արևմտեան եւրոպան իւր քաղաքակրթութիւնը պարտական է Յունաստանին։

Այսպէս է բնորոշում յարդելի ուսուցչակետը հելենականութեան գարի նշանակութիւնը աղդերի քաղաքակրթութեան պատմութեան մէջ։ և յիշաւի ներկայումն հելենակունութեան այս շրջանը գրաւում է պատմակէտների և աստուածաբանների առանձին ուշադրութիւն, որովհետեւ այդ զարդը նկատուում է նաև իւր նախապատրաստական շրջան քրիստոնէական կրօնի՝ եթէ ոչ ծագումը՝ գոնէ արագ տարածումն ու եկեղեցու զարգացման ընթացքը հասկանալու, ահա թէ ինչու Արարատ կրօնական ամսագրի ընթերցողներին անհետաքրքիք չէր լինի մի ամփոփ գաղափար կաշմել հելենականութեան գարի մասին։